ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 10-ԱՄՅԱԿԸ

Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ

Մեր ակադեմիայի տասնամյակը կուսակցությունը նշում է Հայ ժողովրդի կյանքի պատմական տարեմուտի՝ Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 30-րդ տարեդարձին։ Այդ տարիների ընթացքում լուծված տեսակետով ահռելի են հեղափոխության էկոնոմիկան, կուլտուրան և գիտությունը։

Այժմ ակադեմիայի կազմի մեջ մտնում են մոտ 30 գիտական հաստատություն, որից 12-ը՝ գիտա-հետազոտական ինստիտուտներ, մի շարք սեկտորներ և լաբորատորիաներ, աստղադիտարան, սեյսմիկ կայան, բուսաբանական այգի, հիդրոբիոլոգիական կայան, պատմական թանգարան և այլն։

Մեր ակադեմիան ունի 675 գիտական աշխատող, որոնցից 246-ը դոկտոր են և գիտությունների թեկնածու։

Անցած տասնամյակում մեր գիտնականները մշակել են մի շարք գիտական պրոբլեմներ և դարձի աշխատանք են կատարել գիտական հետազոտությունները արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ արմատավորելու ուղղությամբ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան իր ամբողջ գործունեության ընթացքում օգնություն է ուղարկել ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայից և եղբայրական հանրապետությունների գիտական հաստատություններից։

Մեր ակադեմիան ունի հինգ բաժանմունք՝ ֆիզիկո-մաթեմատիկական, տեխնիկական, բիոլոգիական, գյուղատնտեսական և հասարակական գիտությունների։

Հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտները մշակել են հայ ժողովրդի պատմության, գրականության, արվեստի ու լեզվի վերաբերող մի շարք կարևոր թեմաներ։ Ուշագրավ է պատմության ինստիտուտի գիրքը՝ Ս. Երեմյանի աշխատությունը՝ հայ ժողովրդի էթնոգենեզի և հին Հայաստանի ազգագրական հատկությունների ուսումնասիրության վերաբերյալ։ Գրականության ինստիտուտը վերջին տարիներին հրատարակել է հայ գրականության կլասիկների երկերը և հետազոտություններ ուսումնասիրել հայկական գրական կապերի մասին։

Արդյունավետ են աշխատում հնէաբանները։ Նրանց աշխատանքի արդյունքները հարուստ նյութ են տալիս ուսումնասիրելու հայ ժողովրդի պատմական անցյալը։ Վերջերս հայտնաբերված է հին հայկական արվեստի բացառիկ մի նմուշ՝ Գառնիում գտնված և մեր թվականության I—II դարերին վերաբերող մոզաիկան։

Լեզվաբանության ասպարեզում մեծ ավանդ է Հ. Աճառյանի «Հայոց լեզվի լիակատար բառարան»-ը 562 լեզուների համեմատությամբ։ կազմելու աշխատությունը, որի 2-րդ հատորը տպագրության է պատրաստվում։ Լեզվի ինստիտուտում հետաքրքրական հետազոտություններ են կատարում նաև մյուս գիտնականները, որոնց զբաղված են ժամանակակից հայ լեզվի գիտական քերականության, պատմության ու բարբառների ուսումնասիրությամբ։ Ի թիվս այլ հրատարակությունների շուտով լույս կտեսնի առաջին հայերեն մեծ բառարանի առաջին հատորը, որ պարունակում է 30 հազար բառ։

Հասարակական գիտությունների բաժանմունքը զբաղված է Հայաստանում Սովետական իշխանության հաստատման, տնտեսության սոցիալիստական վերակառուցման շրջանին և Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի հետագա զարգացման պրոբլեմներին վերաբերող հարցերով։ Ինքին հասկանալի է, որ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական աշխատողների կոլեկտիվը դեռ շատ բան ունի անելու։

Գյուղատնտեսության ասպարեզում շարունակում է հետազոտություններ կատարել Բույսերական Ասատրֆիզիկական գիտարանը՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանի ղեկավարությամբ։ Վ. Համբարձումյանի հետազոտությունները հնարավորություն են տալիս ընդհուպ մոտենալու աստղերի կազմության հարցին, ինչպես նաև երկնային այն մարմինների ուսումնասիրությանը, որոնցից կազմվում են աստղերը։

ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ս. Մերգելյանը և պրոֆ. Մ. Զբրաչյանը աշխատում են մոտավորությունների տեսության պրոբլեմի վրա՝ կոմպլեքսի ասպարեզում։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Շահինյանի գլխավորած բաժանմունքի մեջ բերած արդյունքները մոտավորությունների տեսության հարցերի վերաբերյալ՝ առաջնակարգ նշանակություն ունեն և մի անգամ ևս հաստատում են սովետական գիտության առաջնությունը մաթեմատիկայի այդ հարցում։

Լայնը հայտնություններ է մեջ բերել ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքը։ Մեր և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիաների ֆիզիկայի ինստիտուտները համատեղ հետազոտություններ են կատարել կոսմիկական հառագայթների ուսումնասիրության ասպարեզում։

Մեխանիկների մի խումբ մշակում է նյութերի հաստատության տեսությունը։ Լույս է տեսել Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ն. Հարությունյանի «Հաստատության տեսության մի քանի հարցերը» մենագրությունը, որ որոշ առաջադիմություն է այդ տեսության մշակման բնագավառում։

Բավականաչափ հաջողություններ են մեջ բերել նաև Հայաստանի գիտական-կանոնները տեխնիկական գիտությունների ասպարեզում։ Արդեն նոր ավյուններ են ստացված երկրաբանության, ջրային էներգետիկայի, քիմիայի, շինարարական գործի ու էլեկտրատեխնիկայի վերաբերյալ և պրակտիկ կիրառություն են գտել տեսությունի ժողովրդական տնտեսության մեջ։ Շինանյութերի և կառուցումների ինստիտուտի աշխատակիցները բազմաթիվ պրոբլեմներ են մշակել շինարարական աշխատանքները մեքենայացնելու, տեղական նոր շինանյութեր հայտնաբերելու ու նրանց տեխնոլոգիան ուսումնասիրելու ուղղությամբ։ Ինստիտուտում մշակված են մի շարք հարցեր, որոնք սերտորեն կապված են մեր տեսությունի քաղաքներում և գյուղերում ծավալված հսկայական շինարարության պահանջների հետ։ Օրինակ՝ ուսումնասիրված են հրաբխային ծակոտկեն նյութերից՝ պեմզայից, տուֆաքավիչից և տուֆերից պատրաստվող բետոնների հատկությունները։ Այդ ուսումնասիրությունների հիման վրա մեր շինարարության մեջ լայն կիրառում են գտել իրենց խիստ ամրությամբ և էժանությամբ աչքի ընկնող թեթև բետոններն ու երկաթբետոնները։ Քարերի կարգի տեսակները մշակելու համար ստեղծվել է մի նոր քարաֆրեզերային դազգահ, որը հաջողությամբ արմատավորված է արտադրության մեջ։

Երկրաբանական գիտությունների ինստիտուտում ավարտված են հանքավայրերի կազմավորման օրինաչափությունների ու նրանց դասակարգման հետազոտությունները։ Այդ աշխատանքները կատարվում են մեր ակադեմիայի իսկական անդամ Հ. Մազաբյանի գլխավորությամբ։ Մեծ և օգտակար աշխատանք է կատարում ակադեմիայի իսկական անդամ Ի. Եղիազարովի ղեկավարությամբ գործող ջրա-էներգետիկ ինստիտուտը, որ զբաղվել է հիդրոտեխնիկական հետազոտությունների հիմնական կենտրոն։ Բիմիկոս գիտնականները մշակում են տեխնոլոգիայի նոր տեսակներ ռեսուրսիկայի հումքի ռեսուրսները ավելի լավ օգտագործելու համար։

Ուշագրավ է կենսաբանական գիտությունների բաժանմունքի գործունեությունը։ Բուսաբանները ուսումնասիրելով ռեսուրսիկայի բուսականությունը՝ շատ բանով օգնում են Հայաստանի քաղաքների ու գյուղերի կանաչապատմանը։ Բույսերի ֆիզիոլոգիայի հետազոտությունները, որ կատարում է կենսաբանական գիտությունների դոկտոր Վ. Ղազարյանը, արդեն արժեքավոր արդյունքներ են տվել։ Կենդանաբանները և բուսաբանները տպագրության են պատրաստել «Կովկասի ֆլորատեսակները», «Միջին բույսերի զարգացման ատլասիկանությունը», «Հայկական ՍՍՌ պտղատու կուլտուրաների վիտամինները» մենագրությունները։ Կազմվում է «Հայաստանի բուսական աշխարհ» աշխատությունը։ Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու գործում լայն դեր պետք է կատարեն ռեսուրսիկայի կոլտնտեսությունների հոդագրական բարեգործները, որ կազմում են գիտական-հոդագիտները։

Բուս մեծ ֆիզիոլոգ Ի. Գավրիլի ուսմունքի հետագա զարգացման հետ սերտորեն կապված են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտի հետազոտությունները։ Ինստիտուտի կոլեկտիվը աշխատում է ակադեմիայի իսկական անդամ Հ. Բունյաթյանի ղեկավարությամբ՝ մի շարք ֆիզիոլոգիական պրոցեսների բիո-քիմիական մեխանիզմը կիրառելու հարցերի վրա և արդեն որոշ հաջողություններ է մեջ բերել։

Իրագործելով սոցիալիստական գյուղատնտեսության հետագա զարգացման վերաբերյալ պարտիայի և կառավարության կայացրած որոշումները՝ գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքը իր գործունեությունը կենտրոնացրել է կոլտնտեսություններին պրակտիկ օգնություն ցույց տալու վրա։ Միչուրինյան ազրոբիոլոգիայի հիման վրա գիտնականներն ստացել են ցորենի, բանջարանոցային կուլտուրաների և խաղողի մի շարք նոր, բարձր բերքատու տեսակներ, որոնք արմատավորվում են կոլտնտեսային արտադրության մեջ։

Դժվար է ներկա հոդվածում թվել այն բոլոր պրոբլեմները, որոնց վրա աշխատում են Հայաստանի գիտնականները։ Կոմունիստական շինարարությունը մեր երկրում առաջ է քաշում ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի բոլոր բնագավառներին վերաբերող նոր պրոբլեմներ։ Այդ խնդիրները հաղթահարելու համար մեր գիտությունը առաջ մղելու համար ռեսուրսիկայի գիտնականների շարքերը պետք է անընդհատ համալրվեն գիտական երիտասարդ, ստեղծագործ կադրերով։ Տարեց-տարի ավելանում է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի և բարձրագույն ուսումնական հաստատությունների ասպիրանտների թիվը։ Գիտական կադրեր պատրաստելու գործում մեր ակադեմիային մեծ օգնություն են ցույց տալիս ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիան և Մոսկվայի ու Լենինգրադի գիտա-հետազոտական շատ ինստիտուտներ։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը հոգատարությամբ և ուշադրությամբ են շրջապատել գիտնականներին, անհամբերությամբ պայմաններ են ստեղծել նրանց ստեղծագործական աշխատանքի համար։ Գիտնականների պարտականությունն է պատասխանել այդ հոգատարությանը՝ իրենց բոլոր ուժերը և ապագիտելով սովետական ժողովրդին, աշխատավոր ժողովրդին, հերոս ժողովրդին և մշտապես ամրապնդել սոցիալիստական աշխարհի խաղաղության պատվար հանդիսացող սոցիալիստական մեր մեծ Հայրենիքի հզորությունը։